

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Մանուցման տողը
20 ամսիս



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Irayounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравункъ

ВАРНА

Գրութեանը ետ չեն
տրուիր

ԳՈՐԾԸ ԵՒ ԿԵՏԵՒԱՆՔԸ

Անուրանալի ճշմարտութիւն է թէ ամէն գործ իրեն համապատասխան հետեանքը կունենայ լաւ վարուած գործի մը հետեանքը լաւ իսկ գէշ վարուածինը գէշ կըլլայ:

Գէշ վարուած գործէ մը լաւ արդիւնք սպասողը յուսախաբ կըլլայ: Գէշ գործունէութիւնը լաւ ցոյց տալը խաբեբայութիւն է: Սխալը չը խոստովանող կամ ծածկել ջանացող հանրային գործի մը դատապարտուած է վաղ կամ անագան խայտառակութիւնը գործին հետեանքովը որ չուշանար երեան գալ: Վերջապէս մէջ տեղ եկած գէշ հետեանքը սքօզել ջանալու վարպետորդութիւնը էն նողկալի հապտուութիւնն է, որ կրնայ անցնիլ միայն այն տեսակ մարդոց որոնք աչք ունին ու չեն տեսներ եւ ակնաջ ունին ու չեն լսեր:

Հանրային գործ մը ստանձնող անհատ մը կամ անհատներու խումբ մը, եթէ ջանայ իր սխալները ծածկել հանրութեան առջեւ չը վարկաբեկութիւն համար, ի դուր կ'աշխատի: որովհետեւ չուտ վրայ կը հասնի գործուած սխալներու վատ հետեանքը, որ երեւոյթով անհրաժեշտ կապացուցանէ թէ սխալ գործունէութեան արդիւնքն է:

Նոյնպէս պէտք է բժշկանի մը արդիւնքին ներկայ վիճակը: Ասկէ քսան տարի առաջ բոլոր հայութեան հաւատքն էր թէ լաւ ղեկավարուած հայրենասիրական գործունէութիւն մը մեզ փրկութեան հանգրուանը պիտի կրնար առաջնորդել: Բայց այսօր մէջ տեղ կեցած մեր գէշ վիճակը՝ նոյնիսկ առանց վրայութիւններու փաստեր որոնելու՝ մեզ ցոյց կուտայ թէ գէշ գործունէութեան մը բացասական արդիւնքն է: Եթէ այդ գործը գէշ կերպով չը վառէր այս գէշ հետեանքը մեզ չպիտի վիճակէր:

Ստեղծուած արդի գէշ վիճակը

ակնյայտ ըլլալով հանգրեւ, ելլել վարուած գործը յաջող եւ արդիւնաւոր ցոյց տալ ուղեւը կը նմանի օրն ի բուն մեզ այրող արեւին գոյութիւնը ծածկել ջանալ: Միթէ կարելի՞ է այս՝ Բնականապէս անկարելի է:

Ահա այսպէս ինքզինք անկարելիութեան մէջ դրած էր կիրակի օր Դաշնակցական գործիչ Տ. Տիգրանեանը, որ ատենախօսեց «Պօրիս» թատերասրահին մէջ, եւ որուն ատենախօսութիւնը քննադատած էր մեր Ա. աշխատակիցը իր կծու եւ կծող հեգնութիւններովը: Բայց այդ գրութեան հեղինակ մասը մէկ կողմ ձգելով, մենք առնենք Տ. Տիգրանեանի սա յայտարարութիւնը:

Դաշնակցութիւնը կը շարունակէ գործել նոյն ձեւով: Իսկ ամբողջական պատասխանատուութիւնը կրնայ հայ ժողովուրդին վրայ:

Նախ խոստովանինք՝ Տ. Տիգրանեանն ալ կը խոստովանի կարծեմ՝ թէ Նազարեկեան եւ Դաշնակցական գործունէութիւնները սկսելէ առաջ հայ ազգի վիճակը թէ՛ Տաճկաստանի մէջ եւ թէ՛ Ռուսաստանի բաղդատար շատ աւելի տանիլի էր քան այդ երկու յեղափ. կուսակցութեանց գործունէութիւնը սկսելէ ապիւն:

Ահագին կորուստներ եւ զոհեր տալով վատթարոյն վիճակի մը մեր ենթարկուիլը գլխաւորապէս հետեանքն է ուրեմն այն գործունէութեան զոր ունեցան յիշեալ երկու կուսակցութիւնները մեր վիճակի բարեփոխումին անունով: Բայց արդիւնքը փոխանակ բարեփոխութեան չարափոխութիւն եղաւ, որ կը սպառնայ թէ՛ Տաճկահայաստանի, թէ՛ Ռուսահայաստանի թէ՛ վաղը Պարսկահայաստանի հայութեան ընդհանուր խոշտողմանը: Բնաշնչումին:

Այս է դառն եւ ակներե իրականութիւնը որ գլխաւորապէս հետեանքն է Տ. Տիգրանեանի հայկական յեղափոխական Գործ անուանածին, զոր իր կիրակի օրուան ատենախօսութեան մէջ

յայտարարեց թէ «Դաշնակցութիւնը պիտի շարունակէ նոյն ձեւով»:

Հայ յեղափոխական Գործը ցարգ գէշ եւ սխալ վարուած ըլլալուն բերաւ որ ապացոյցները մէկ կողմ թողնով, այդ գործին վատթար հետեանքը այլեւս ակնյայտ ըլլալէ յետոյ՝ պայն ծածկել կամ անկարելի ցոյց տալ ամբօխին՝ եպերելի հապտուութիւն մըն է, իսկ այդ գործը նոյն ձեւով շարունակել յստաութիւնը անորակելի ոճրագործութիւն մը:

Հանրային գործի մը կամ նախարար մը կամ գործիչներու խումբ մը երբ իր գործելակերպով անյաջողութեան կը մատնուի եւ իր այդ գործունէութիւնը ժողովուրդին համար գէշ վիճակ մը կը սպառնայ, անմիջապէս կը քաշուի որ գործը ուրիշ ձեւերու յանձնուի եւ կամ իր գործելակերպը կը բարեփոխէ: Առաւել կամ նուազ պարկեշտ գործիչներու համար այս պարտաւորիչ է եւ ընդունուած ամբողջ աշխարհէն, Բայց, ըստ Տիգրանեանի, քանի որ «Դաշնակցութիւնը պիտի շարունակէ նոյն ձեւով գործել, դա կը նշանակէ թէ այդ կուսակցութեան ղեկավարները պարկեշտութեան եւ խղճահարութեան ոչ մէկ կայծ չեն կրեր իրենց կուրծքին տակ, եւ ընդհակառակը անորակելի յամառութեամբ մը կը յանդգնին իրենց ներկայացուցչին բերանով յայտարարել թէ իրենց գէշ ու սխալ գործելակերպին ամբողջական պատասխանատուութիւնը կրնայ հայ ժողովուրդին վրայ»:

Եթէ Տ. Տիգրանեան նիւթական պատասխանատուութիւնը միայն հայ ժողովուրդին վրայ ձգէր, այդ կը հասկնայինք, որովհետեւ իրենք աշխարհի մէջ նիւթական ոչինչ չեն բռներ ու ժողովուրդին հացովը կը սնանին: Եւրոպայի, Կովկասի ու Ամերիկայի մէջ, հետեւաբար նիւթապէս տուածով ամէն պարագայի մէջ միայն ժողովուրդն է ու պիտի ըլլայ: Բայց գալով բա-

րոյական պատասխանատուութեան, այդ բոլորովին կը ծանրանայ այն եսամոլ, յամառ անուղղայ գործիչներուն վրայ, որոնք մինչեւ կողորդներն անպարտ ժողովուրդին արեան մէջ մխրճուած դեռ կը յամառին շարունակել նոյն ձեւով գործել:

Ի՞նչք պարտ կզգանք անգամ մըն ալ ձայն բարձրացնել այդ շարունակելի յայտարարուած գործելակերպին դէմ եւ բռնել: Պարոններ, այդ յեղափոխական գործ չէ, այլ պարզ ազգայնականութիւն, որուն հետեանքը հայութեան համար աղէտաբեր եղաւ եւ դեռ պիտի ըլլայ, եթէ շարունակէք նոյն ձեւով: Իսկ աղէտներուն պատասխանատուութեան հանդ բաժինը չէք կարող հայ ժողովուրդին ուսին դնել՝ ձեր եւ ձեզ հետեղ միամիտ փոքրամասնութեան ուսերէն թօթափելով: Պարտիք կամ գործէն ետ քաշուիլ կամ ուղղուիլ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱՆ ՅՐԱՆՍԱՅԻ ԼՔՈՒԱՅ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԵՐՁԵՑԱՅ

Յայտի է թէ Ֆրանսայի մէջ ուսական նոր փոխառութեան մը փորձը անյաջողութեան մատուցաւ: Ֆրանսան իր մինչեւ ցարգ փոխառած միլիարդներուն վրայ նոր միլիարդներ բարդել չուզեց քանի որ իր առջի տուածներն ամբողջապէս վերըստանալու յոյսը օրէ օր կը սկսանար Ռուսիոյ համար ճշմարիտ աղէտ մը եղող ռուս-ճարտական պատերազմին շարունակութեամբը:

Ռուս հայրենասէրներէ շատեր ալ բացորոշ կերպով խորհուրդ տուին Ֆրանսանցոց որ նոր փոխառութիւն չընեն Ռուսիոյ, որովհետեւ արդող արդի վարչութեան անտեսական եւ բարոյական հիմքը խախտու են եւ մօտ է քանդումը: Եթէ Ֆրանսան նոր փոխառութիւն չընէ ապագայ ռուս լեզուային ինքնորոշ դայն չը պիտի ճանչնայ քանի որ նոր տրուելիք դրամը պիտի ծառայէ պատերազմի երկարաձգումին, ինչ որ ազգին կամքին հակառակն է: Եւ այդ նոր փոխա-

սուսթեմայի միջոցով և ուրիշ ժողովուրդներին թէ թշուառութիւնը աւելցուցած պիտի ըլլայ եւ թէ իր զբոսը կորուստի մասնաւոր : Ծանօթ տուաւ հայրենասէրներու կողմէ եղած այս յայտարարութիւնները , բանաւորին մատակարարութեան մէջ վերջերս յայտնուած խոշոր գիղձմէնները եւ մանաւանդ ներքին խռովութիւնները եկան համոզեցին Յրանսան թէ մինչեւ որ խաղաղութեան պայմանները չը կնքուին եւ երկրի վարչութիւնը չը բարեկարգուի Ռուսիոյ կրկին պիտի վերստին թէ անտեսաւ : Եւ թէ քաղաքակրթական տեսակէտներով պիտի է եւ Մ. Վիթթէի բոլոր պերճախօսութիւնները Բարիզի մէջ չոր փոխառութիւն մը յաջողցնելու համար ապարդիւն մնացին : Ձարը եւ իր կառավարութիւնը ինքզինքնին այլեւս լքուած զգացին զինակից Յրանսայէն , որ իրենց աչքին արգէն կասկածելի ըլլալ սկսած էր Անգլիոյ հետ մտերմութիւններ հաստատելովը :

Ուստի միապետութիւնը իր ներկայ օւժանկատ վիճակին մէջ զօրուոր նեցուկի մը անմիջական պէտքը ունէր եւ Ձարը ու մեծ դուքսերը իրենց ակնարկը Գերմանիոյ ուղղեցին : Եւրոպական կարեւոր հանգէտի մը բեզբարպետական թղթակցելու Ձարին ամենամօտ անձնաւորութիւններէն հետեւեալ գաղտնիքները քաղած է :

« Թէեւ Ձարին շուրջը գտնուողներէն շատերը չեն գիտեր թէ Պալիսկ ծովուն վրայ Ձարին եւ Վիթթէի կայսեր միջեւ ինչ խօսակցութիւններ տեղի ունեցան . սակայն անկէ առաջ եւ յետոյ ձեռք առնուած միջոցները այդ մասին բաւական զաղափար մը կուտան : Այսպէս , Ձարը իր մեկնումէն առաջ երկու ժամ տեսակցեցաւ Ալէքսանդր եւ Վլադիմիր Ֆեոփանովիչին : Խօսակցութիւնը խոստովանեցաւ որ հաւանականաբար ներքին խռովութեանց մասին էր : Նոյնպէս Ձարը իր մեկնումէն առաջ , Պալիսկին հետ բանակցութիւն կատարելու առաւ եւ Պալիսկին գտնուող Ռուսիոյ երկուստեան գործակալը Մ. Մէնտլսոն գնաց Գերմանիոյ նախարարական իշխան Պիւլովի քով բա-

նակցելու թէ կարելի է Գերմանիոյ մէջ ուստական փոխառութիւն մընել . եւ հոն որոշուած ժամադրութեան մը վրայ էր որ Ձարը Վիթթէի կայսեր հետ տեւէ պիտի գնաց :

« Այսօր նախ ամստօրօք այդ մասին իւր հօտիւր չի հրահանգները առած Բէթթէի փոխ պաշտօնէն մայրաքաղաք վերադարձաւ : Նախարարական պաշտօնատան մէջ կը հաստատուէր երկու վեհապետներուն Վիթթէ տեղի ունեցած տեսակցութեան : Գլխաւոր նպատակն էր Պիւլիսկի մէջ ձեռք բերել ինչ որ չկրցին խրակահեղեղ Բարիզի մէջ : Եթէ այս ձեռք բերելու քանի որ Մ. Վիթթէի ջանքերը ֆարքի մէջ անյաջող անցան , գործը ծանր հետեւանքներ պիտի ունենայ . որովհետեւ այդ պարագային , խաղաղութիւնէն յետոյ , եւրոպական գործերու մէջ , Գերմանիան պիտի ըլլայ Ռուսիոյ նեցուկը : Ֆրանսոս-ուստական կցութիւնը եւ մանաւանդ Մ. Վիթթէի նախատեսած անգլո-ուստ մերձեցումը պիտի ոչնչանան եւ այսպէս Գերմանիան պիտի յաջողցնէ « հորիզոնական » զինակցութեան իր ծրագրին մէջ մասը :

« Զուտ պաշտօնական սղորիւրէ մը քաղաքացի այս տեղեկութիւնները կը զրկուի իր կատարելագոյն վաւերականութիւնը :

Ահա ուրիշ նամակ մըն ալ Բէթթէի քաղաքակրթական շոյն հանդիսին գրուած .

« Ձարին վերադարձէն վերջ Լաւաթորֆին ստացած հրահանգներէն քանի մը մանրամասնութիւն իմացայ : Իր հասկացութիւն Գերմանիոյ գլխաւոր փափաքն էր ստուգել գիտնալ թէ խաղաղութիւն պիտի կնքուի թէ ոչ , եւ ինչ պիտի ըլլայ Ռուսիոյ ընթացքը Եւրոպիոյ մէջ : « Փոխառութեան խնդրոյն մէջ Ձարը փոխան ըլլալ կը թուի Գերմանիոյ ուժեղ աջակցութեան : Այս պայմաններուն մէջ Վիթթէի պարտի գիտնալ թէ խաղաղութիւնը վերահաս է , եւ թէ Ձարը ու եւ նպատակ չունի հակազդեման դաշնակցութեան մը մէջ մտնելու : Այս մասին ինչ կը փաստէ Բէթթէն : Ձարին տուած պաշտօնականութիւնները խիստ լուրջ են , բայց ինչ տեղեկութիւն տուողը անոնց մասին խօսել բոլորովին մեր ժեց : »

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Օ Թ Ե Լ Լ Օ

Բոլորովին արգահատելի ու ցաւալի կը գտնուէր մեր կարգ մը հայ գերատնայնները , որք երբ , հազիւ հազ բնմին վրայ , մի քանի նախադասութիւն անսխալ արտասանելու , պարզ քաղաքացի մը քաջիւր , ամենօրեայ գործածուած մի քանի շարժումներ ու ժեստեր բնուէր եւ մէկ երկու դերեր կարենալ կատարելու մէջ ինքզինքնին քիչ ու շատ վարժ կզգան , ու նամանակաւոր երբ թերթերու մէջ իրենց մասին , գրուած երկգիր դժուարներ մը կամ բարեկամի մը մտերմական զգացումներէ մղուած իրենց ձեռքը սեղմելու երբ կը տեսնան անգուսպ ու կատաղի մալ-նիսացումով մը դէպ ի Եւրոպիոյ եւ անոր երկասիրութիւնները կը ձգտին . ալ հոն առաջին քայլին իսկ սկսանակ նաւարկողի մը ամենի անփորձութեամբ փառաց շրջապէս հմայքին տակ ծածկուած արուեստական խորատոյգ զօրաբութեանց բաղինլով , կը ջարդուին , կը փշուրն եւ կը ջախջախուի իրենց գլուխը իւր բոլոր իշխանաւան ու անձնապատան հակայ խորհուրդներով ու ժողովներով , թողլով յուսահատութեան անխառն վիճակի մէջ իւր պէտքէն խորագրուած ու անհետանալ իրենց ապագայ սիւզերագոյնը հրոյշակին ոսկեհիւս երազները :

Գրեթէ մէկուկէս ամիսէ ի վեր է , որ քաղաքիս « Միւր Պաշտօնական Մարտիկ » մէջ « Վարկէթէ » խումբը եթէ ոչ բոլորովին յաջող , գոնէ՝ ոչ գնաբեր ու բաւական այ ունենալ գրելի միջակութեամբ տրամեւրու շարք մը կը ներկայացնէր . որոնց մասին գրելու քննադատելու աւելորդ համարեցի . երբ բարեկամներէս մին եւ Ռէթիւօրին մտերիմ մէկ արուեստակիրը ինձ բաւ թէ .

« Այս խաղերը այնքան մեծ խնամքի առարկայ եղած չէին որովհետեւ պարզապէս ժողովուրդը պատրաստուելու համար էր . իսկ Պ. Շաւարշի ընդունումը — ինչպէս ինք ալ քանի քանի անգամներ ըսաւ . Եւրոպիոյ

ներս են : » Բաւական զօրաբութեամբ այլ պէտք է համարել :

Պատեհ անթիւ կը ներկայանայ , յուլիս 17 կիւրակէ զիչեր Եւրոպիոյ ներքինը — առաջինը Ռուսո Ժիւլիէթ էր եւ հիւանդութեան պատճառով ներկայ չկրցայ ըլլալ — Օթէլլո :

Թատրոնը միջակ այլ հասկցող հանդիսատեսներու բազմութեամբ մը լեցուած էր :

Վերջապէս վարագոյրը լացուեցաւ ու չէր սխալած . կտորը զօրաբութեամբ էր :

Պ. Շաւարշ ոչ մի յատկութիւն ցոյց տուաւ Օթէլլո ըլլալու խաղին սկիզբէն մինչեւ վերջը :

Նախ ինչպէս յայտնի է Պ. Շաւարշ իւր կազմուածքի տեսակէտով բոլորովին հակապատկերն է Օթէլլոյին , ինք այնքան կարճահասակ որ նենդ նակօրն եւ ամօթապարհաւորին մէջ իսկ կը կորսուէր . իսկ տղայ մը միայն իւր վեներականի սիրուհոյն գրկին ու բաղկացր մէջ . որով բոլորովին հետո էր Եւրոպիոյ մալիսատեսներին պատկառող ու անհանկի զատկեցացումն :

Երկրորդ՝ ձայնը , հասակէն շատ ու շատ աննպատ . այնպէս որ բարկութեան ու կատաղութեան որոտնդոտս գոռ ու գոչին փոխան պատանիի մը պոռոչութիւն տպաւորութիւնը թողուց : Իսկ մի քանի անգամուան ձայնը թափնելու փորձերը՝ հաց կերողի մը լեցուն բերնով խօսուածքէն երեք տարբերութիւն չունեցան :

Վաւերաւքին մէջ վեներին մտքը ներսը ջանքերն ալ բոլորովին աննպատ անցան քանի որ կեղծիք բեր ջոխնքով կը ճառագայթէր : Խօսուածքին մէջ մասնաւոր եւ զանալ մը կար որ ուրիշ խաղերու մէջ ալ չպակսիր ձեռքերու աչք ձախ շարժումներն հետ փոքի ու հակափորի ճոճուն անհամայն օրորումը մը ընկերացած :

Երրորդ վարագոյրին իւր ողբ ու կոծի եւ շարժումներուն մէջ աներեւակայ իրօքէն անտեղի ու անհիմն աներկողաբանութիւններ մտցուց :

Պատ մ'ալ ծերակոյտի ներկայա-

ՄԻ ԲԱՆԻ ՄՏԲԵՐ
ԵՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Մի երկրի քաղաքական կեանքի երեւոյթները բոլորովին անմասնաշեղի են այն մարդկանց , որոնք ծանօթ չեն այդ երկրի թէ՛ պատմութեան եւ թէ՛ ժամանակակից հասարակական ու տնտեսական երեւոյթներին :

Տգեւ ժողովուրդը չէ կարող ճանաչել մարդկանց եւ գնահատել նրանց հասարակական գործունէութիւնը , որովհետեւ այս բանի համար պահանջուում է այն , ինչ որ պակաս է նրան՝ այն է մտաւոր զարգացումը :

Եւրոպայի մէջ ժողովրդի համար առաջին ուսումնաբանները հիմնուեցան քրիստոնէութիւնը մտցնելու ժամանակ . ուրիշ այդ ուսումնաբանները իրենց ծագումը պարտական են քրիստոնէութեանը :

Մի մեծ չէ կարող միշտ մեծ գործերով պարագլու . կեանքը իւր ամեն տեսակ պահանջներն ունի , որոնք ըստ երեւոյթին չնչին բաներ են երեւում .

Երբ մի լճի մէջ մի քար ձգէ՝ քարի ընկած տեղի մակերեսային վրայ իսկոյն կը կազմուի մի փոքրիկ շրջան , որ հետզհետէ ալիքների նման կսկսուի ընդարձակուել շրջառոր մակերեսային վրայ . այդ շրջանի ալիքները առաջ կը հոսին նախ շատ նկատելի կերպով եւ ապա՝ քանի կը հեռանան այն տեղից , ուր ընկաւ քարը՝ նոյնքան աւելի դանդաղ եւ թոյլ կը լինին . նոյն բանն է պատահում եւ մարդկային կեանքի մէջ .

Ճորտատէրերը երբեք իրանք չեն ազատում իրանց ճորտերին , մինչեւ որ պետութիւնը չտարպէ նրանց այդ տնելու եւ կամ մինչեւ որ իրանք ճորտերը չ'ապստամբուին իրանց տէրերի դէմ :

Նեգրերին (սեւամորթ) ազատելու միտքը նախ եւ առաջ ծնուեց եւ տարածուեցաւ Եւրոպայի մի քանի մասնաւոր ընկերութիւններին մէջ . որոնք հասարակական կարիքի վրայ ազդելով ստիպեցին վերջապէս տէրութիւններին պատերազմ յայտնելու նրանց ազատութեան համար :

Զուրիցերիայի ժողովրդի ինքնաճանաչութիւնը հասցրած է մինչեւ այն աստիճանի զարգացման , որ նա չէ խաղվում զանազան դատարկութիւն , վայրկիւրայ ազատամտութիւն քարոզող մարդկանց խօսքերով : Եւ ցանկալի էր , որ մի լրագրութիւնն էլ ուսումնասիրէր , քննէր եւ ապա գրէր ինչ որ գրելու է , եւ ոչ թէ յափշտակուէր վայրկիւրայ , դատարկութիւն եւ չինձու ազատամտութեամբ :

Առհասարակ մեր թէ՛ երիտասարդները եւ թէ՛ հասակաւորները չգիտեն , որ քաղաքականութիւնն էլ (պոլիտիկա) մի այնպիսի տարր է (գիտութիւն է , ինչպէս քիմիան , ֆի-

զիկան եւ այլն , եւ որ դատարկ խօսել եւ գրել քաղաքական երեւոյթներ վրայ առանց այդ պիտուի թիւնը մասնաւորապէս ուսումնասիրած լինելու՝ ծրագրելի եւ մինչեւ անգամ վնասակար :

Եթէ երկու մարդկանց մէջ անբաւականութիւն պատահի եւ այս մարդիկը իրանց անբաւականութիւնը վճռելու եւ միմեանց մէջ իրանց յարաբերութիւնները պարզելու համար կոռուելուց , ծեծուելուց , վիրաւորելուց եւ վերջը գոցէ սպանելուց ուրիշ միջոց չգտնեն՝ գուցէ կասէք , թէ դո՛ք անկիրթ եւ կոպիտ մարդիկ են ք իայց միեւնոյն ժամանակ այն , ինչ որ մեծ դատապարտում ենք որպէս վերին աստիճանի անկրթութիւն եւ կոպտութիւն մասնաւոր կեանքի մէջ՝ թոյլ ենք տալիս եւ շատ ընական ենք համարում քաղաքական կեանքում :

Հին ժամանակներում պատերազմների մեծ մասը նուաճող պատե-

ցուցիչ Լուսավորիկին երեսին պոռն-
տելով զայն վնասեց որ բոլորովին
բնագրին դուրս է եթէ Պարոնը կար-
գայ պիտի աւանդէ, իսկ եթէ կար-
գացած է կերեւայ թէ դերէն առ-
նուած բեմի վրայ ըլլալը մոռցեր է :

Պ. Պապանան . բաղտամամբ պ.
Շաւարշին տասնեակ մը անգամ յաջող
ներկայացուց Օթէլլոն :

Վերջապէս Պ. Շաւարշին խորհուրդ
պիտի տայի որ ուրիշ անգամ այս
տեսակ սխալով մը թեմ բարձրա-
նայու անմտութիւնը չուենայ :

Թէեւ Պարոնը Պաշկաբոյ մէջ
զանաւոր լաւ դերասաններու
մէջ թիւը կը կազմէ, ինչպէս նաեւ
մեծ անխրատութիւն պիտի ըլլար չը-
սել հոս թէ—Խաղամուկ մը ետեւ-
նամեայ կեանքին մէջ—Վարնէլը եւ-
Մուրացիկ կնոջ—մէջ ծեր հայրը շատ
յաջող կատարեց, եւ եթէ միշտ այս
անգին դերեր խաղար շատ լաւ պի-
տի ընէր :

Անցնինք Եսկիօն . Պ. Շաւարշանը
զայն շատ լաւ ուսումնասիրած էր
եւ գրեթէ բաւական յաջող ալ թեմ
բերաւ թէեւ չկրցաւ իւր նենգու-
թիւնը հանգիստեաներուն ատելու-
թեան արժանանալու ատիճանին հաս-
ցնել ինչպէս Պ. Երամեանը : Այս ալ
բիւնին անխնայօրէն կտրուած ըլ-
լալուն կը պարտին : Իսկ Պ. Շա-
ւարշան կրցած էր ճանչնալ
Եսկիօն աշխատէ ինչպէս որ չէր
կրցած ճանչնալ պարոն Երամ-
եանը եւ կրցաւ միշտ իւր մե-
նութեան մէջ վէս կեցուանքով մը
խորհրդածիլ ու սպասելով մեզ . Պարոն
Երամեան խաղին սկիզբէն մինչեւ
վերջ հնդիկ ֆաբրիկներու պէս շքեթ-
ները ծուկերուն կը գպցնէր :

Տիկ. Շաւարշան միջակօրէն կատա-
րեց Տէգլտմոնայի դերը շատ ու-
շատ հետու Վենիսիցուհի մը նուրբ
ու հրապուրիչ շարժումներէն, նաեւ
մեծ բարեբաղդութիւն որ իւր յաւի-
տանակաւ պէս հետը գուգուած աւել-
տարանակաւ եղանակէն հրաժարուած
էր—կրեւայ թէ այդ տիրացուական
եղանակը ողորդութեան վերապա-
ւած է :

Օթելլոն հետ ներկայացումն ալ
կատարեց, թէեւ շատեր մնացին
հոն, բայց եւ քուրսի արժէքին փոխա-
րինով, ոչինչ պանալով ու չուզելով
ալ ամոռներու վրայ քնանալ, մեկ-
նեցաւ :

ՍՕՅԻԱԼԻՏ

բաղմունք էին : Մարդկութիւնը , որ
միշտ հակումն ունի պաշտել իրան
ճշող , խելոյ ոյժը, հիացած էր
նուաճողներով, ծախահարում են նը-
րանց քաջագործութիւններին , Ամ-
բոյրը երկրպագում էր այդ տեսակ
գաղաններին, որոնք իրանց ցանկու-
թեան համար շատ հազարաւոր մար-
դիկ էին զոհուած . բանաստեղծները
փառաբանում էին նրանց , եկեղե-
ցիները եւ կրօնները օրհնում էին,
արուեստագէտները, քանդակագործնե-
րը նկարիչները նրանց պատկերն ու
քաջագործութիւնները ներկայացնում
էին, գիտութիւնը գովում էր : Եւ
բեւեռի գերմանացի—հրէայ Հէյնէն ,
որ ամեն բանի վրայ ծիծաղում էր,
ամեն բան ծաղրում, որի տաղան-
դաւոր եւ յեղափոխական հեգնու-
թիւնը ամեն հնացած գաղափար ու
նշանցում էր , այնուամենայնիւ խո-
նարհուեցաւ Նապոլէոն առաջինի մե-
ծութեան առջեւ մարդու յատուկ
ստրկային բնութիւնը դարձեալ իրա-
նըն առաւ . . .

Ճշմարիտ մտաւորապէս պարզ մարդ-

ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՄԷՆԵՐԸ

—o—

Պաշկաբոյ մէջ կազմակերպուած
մակեղանոս—նուսին ընկերութիւնը նոր
հակայոյն բրոքակաւ մը սկսած է :

Պաշկաբոյ թերթերուն մէջ տես-
նուեցան այդ ընկերութեան կողմէ
միջոցներ մը հրաւիրագրերը որ յուլիս
20 ին առաջին հասարակութիւնը կը
հրաւիրէր Տաշիւայի արտիք եւ այդ
առթիւ կը թուէր կարգ մը ոճերներ
Մակեղանոյ մէջ գործում Յոյներու
կողմանէ : Մակեղանոս—նուսին ընկե-
րութիւնը այդ հրաւիրագրով կամ-
բաստանէ Պաշկաբոյ յոյն պատրիար-
քարանք եւ Աթէնքի կառավարու-
թիւնը որոնք կը գրգռեն ու կա-
ջակցին եղեր թուրքոյ մէջ ուսմէն
տարրը հարստահարող յոյներուն :

Մակեղանոյ մէջ Գրեց—Ուլան
կամ Յնցար կոչուող մաս մը ժո-
ղովուրդ կայ որ ուսմաներէնի մաս
լեզու մը կը խօսի եւ ցարդ յոյն
հասարակութեան մէջ կը հաշուէր ,
որովհետեւ Յունաց եկեղեցիները կը
յաճախէր , տղաքին յոյն վարժա-
րան կը դրկին քանի որ ուսմանա-
կան վարժարաններ չունէին : Բայց
քանի որ տարիներէ ի վեր Ռու-
սիայի կառավարութեան կողմէ յառ-
կացուած որոշ գումարներու եւ
մասնաւոր բրոքակաւ տեսիլներու մի-
ջոցաւ բաւական թուով վարժարան-
ներ բացուեցան եւ քահանաներ
դրկուեցան որպէսզի Գրեց—Ուլան
գրեղներու մէջ կրօնական արագորդու-
թիւնը ուսմէն լեզուաւ կատարեն
փոխանակ յունարէնի :

Ռուսիայի կառավարութեան պաշտ-
պանութեան տակ սկսած այս գոր-
ծունէութիւնը Յոյներուն եւ ի մաս-
նաւորի Պաշկաբոյ Յունաց Պատրիար-
քարանքին հակառակութիւնը գրգռեց
Գրեց—Ուլան տարրին դէմ :

Այդ հակառակութիւնը աւելի սուր
կերպարանք ստացաւ երբ Ռուսիա-
նան յաջողեցաւ Դուռը համոզել որ
թուրքոյ մէջ ուսմէն ցեղին դո-
յութիւնը պաշտօնապէս ճանչնայ եւ
սա իւր գտն հասարակութիւն մը
իւր ուրոյն եկեղեցին, քահանան
վարժարանը եւ առաջնորդարանը ու-
նենայ անկախ յոյն Պատրիարքարա-

կանց առաջին շարքերը անպատճառ
պիտի ընկնին , իսկ հետեւեալներին
գուցէ յաջողութիւն տնջան ստոր չընկ-
նելու : Ընկալածները կը լինին նե-
ցուկ իրանց հետեւող նոր թարմ
ոյժերի համար : Ապագան միայն
կը գնահատէ նրանց այդ ծառայու-
թեան համար : Բայց ի՞նչ տխուր
միջոցներով , անձնապէս իրան
զոհել ներկայումս, որ ապագայ սե-
րունդներ ընթացքը հետադարձուի . . .
Այնուամենայնիւ այս ճիշտ է եւ
խիստ , թէեւ անբարեկարգութեան
թիւն անհրաժեշտ փաստերից : Բայց
ո՞վ կարող է ստիպել առանձին ան-
հատներին այդ տեսակ զոհարեցու-
թիւն անելու , ոչ ոք, բացի վար-
ժունքի լոգիկայից :

Մեզ մօտ մի գործ սկսելու համար
հարկաւոր է , որ մարդս իւր մէջ
հաւաքէ բոլոր պահանջած յատկու-
թիւնները : Եթէ նա արհեստ կամ
արուեստ գիտէ պէտք է սպասէ ,
որ մի որ եւ միջոցաւ դրամաւորուի
էլ ընկնի իւր ձեռքը , իսկ եթէ
ոչ նրա գիտութիւնն ու աշխատան-
քը անօգուտ են կորչում :

նէն : Դուռը «բաժանեաց դի տիրե-
ցեալ» քաղաքականութիւնը յաւ սեր-
տած , 1904 մայիսին նոր հրովարտա-
կով մը Թուրքոյ մէջ ուսմէն հա-
սարակութեան գոյութիւնը հոշակեց
եւ ուրիշ քրիստոնէայ հասարակու-
թեանց նման իրաւասութիւններ առաւ
ինչպէս ատենաք տուած է հոյ—կա-
թոլիկներուն , Պաշկաբոյներուն , հայ
բողոքականներուն եւ այլն :

Յոյն Պատրիարքարանը եւ կառա-
վարութիւնը գերազգրտուած այս
պաշտօնական վաւերացումէն , փոք-
ձեցին ու կը փորձեն ցարդ իրենց
ստիքի թոյնը թափել խնդ Գրեց—Ու-
լան գրեղացուն վրայ :

Յունացի այս հալածանքին ի
լուր բնականաբար Ռուսիայի ան-
տարբեր չպիտի մնար, ուստի ան-
պաշտօն կերպով կազմակերպեց Պաշ-
կաբոյ մէջ Մակեղանոս—նուսին ընկերու-
թիւն մը (այս ընկե. իւր վերոյիշեալ մի-
ջոցներ հրաւիրագրին մէջ ինչ կըսէ
առաջ) :

«Մակեղանոյ մէջ Ռուսիաները հա-
լածող յոյները մեծաւ մասամբ Ռու-
սիայի ապրող Յոյներէն զրկուած
զրամներով կը գործեն , միջոցաւ
մենք հոս անոնց ամեն կարգի ա-
զատութիւն տուած ենք , Բայց
այլևս չենք կրնար իրաց այս վի-
ճակին տոկալ . չենք հանդուրժեր
որ մեր երկրին մէջ Յոյները ա-
մեն դիւրութեան վաշտեն ու հա-
րստանան շահագործելով ամեն բան
եւ կառուցանեն վարժարաններ, եկե-
ղեցիներ ու պալատներ , մինչդեռ
Մակեղանոյ մէջ անոնք չարարեն
եւ ջարդեն մեր եղբայրները » :

ԱՉԳԱՅԻՆ

Հանգուցեալ Տ. Կարապետ Եղ-
եանց 40,000 ռուպլի արժող ար-
ժեթույթներ կտակած ըլլալով
Սանատրեան վարժարանին, այս
անգամ այդ արժեթույթներու
ցուցակը հանգուցեալի եղբորը
կողմէ Պատրիարքին յանձնուեց
է :

—Պաշկաբոյ խաղիւղէն հրեայ

Կատարեալ բարոյական անկախու-
թիւնը հնարաւոր է միայն այն մա-
նակ, երբ կայ նիւթական անկա-
խութիւն՝ այսինքն երբ մարդս
թէ տղամարդ է թէ կին—ինքն է
վաստակում իւր մի կտոր հացը :

Ամեն բան չպէտք է կեղծանայ-
նել, ընդհակառակն հարկաւոր է ա-
մեն մարդուն , իւրաքանչիւր ընտա-
նիքին, ամեն մի գիւղին, քաղաքին
եւ գաւառին ազատութիւն տալ այս-
պէս կամ այնպէս վարուելու այն
բոլոր հանգամանքներով երբ գործը
միայն իրանց՝ այսինքն այդ մար-
դուն , ընտանիքին , քաղաքին կամ
գաւառին է վերաբերում :

Թշուառական է այն կուսակցու-
թիւնը, որ օգուտ քաղելով ամբողջ
ազատութիւնից եւ անարդարականու-
թիւնից՝ այդ ազատութեան եւ ան-
բարոյականութեան վրայ է հիմնում
իւր բոլոր ոյժը :

Ավրամ Մօլքօ անուն երիտասար-
դը ասկէ առաջ բողոքականու-
թիւն ընդունած ըլլալով, անց-
եալ շաբթու հայ Եկեղեցւոյ
գիրկը դիմած է և Աբրահամ Յով-
սէփ կոչուած :

—Աշգեան Պոլոս պէյ, երու-
սաղէ մի վանքին գէմ դաս մը
բացած է, որով 6000 գաղ. ոսկի
կը պահանջէ :

—Օր. Սօֆի Մանիսալեան կը
ծանուցանէ թէ Գահրէթի մէջ
ազդեանց վարժարան մը կը բա-
նայ, եւ կը խոստանայ աշակեր-
տուհեաց առողջ դաստիարակու-
թիւն մը տալ :

—Առաջնորդական ծանօթ
խնդրոյն համար տեղւոյս թաղ.
Խորհուրդը նպատաւոր պատաս-
խան ստացած է Սօֆիայի թաղա-
կանութեանէ : Բայց Ֆիլիպէի և
Ռուսուգի. Խորհուրդները տա-
կալին իրենց ուղղուած պաշտօ-
նական նամակներուն չեն պա-
տասխանած : Անոնց այս երկար
լուրթեան մասին պիտի պարտա-
ւորուինք խօսիլ յառաջիկայ
շաբթու : Տեղւոյս թաղ. Խորհուր-
դը, կիմանանք թէ, միւս երկրոր-
դական քաղաքներու թաղակա-
նութեանց կարծիքին չէ դիմած
ինչու այս թերին : Մենք վրս-
տահ ենք թէ այդ երկրորդա-
կան վեց թերերը աւելի բուռն
բազմաձող են բանիբուռն առաջ-
նորդ մը ունենալու :

—Վարդապետի տօնին առ-
թիւ յառաջիկայ կիրակի քաղա-
քիս Ս. Սարգիս Եկեղեցւոյն
մէջ պատարագ պիտի մատուցա-
նէ և՛ քարոզ խօսի Տէր Տրիփոն
վրդ : Պիծակեան որ ժամանակէ
մը ի վեր հոս կը գտնուի :

—Սիլվէնի Տ. Վաղինակ քահա-
նան՝ որ ասկէ առաջ շրջակայ
կայարաններէն հանգանակու-
թիւն կատարած էր ի նպատ

Երկու թագաւոր, երկու տէրութիւն
կոչում, պատերազմում են միմեանց
հետ : Մէկը յաղթում է միւսին .
յաղթողի կամքը , իստքը օրէնք է
դառնում, խլովում են նահանգներ ,
միլիոնաւոր ժողովուրդ զրկվում է
հայրենիքից , եւ այս համարվում է
փառք ու պարծանք, սրան անուա-
նում են նուաճութիւն . Բայց արդ-
եօք հարցնում են այդ միլիոնաւոր
մարդկանց՝ թէ կամենում են բոս-
նուել իրանց հայրենիքից եւ մի նոր
հայրենիքի անգամ գտնուի . . .

Մի որ եւ է ազգը՝ քաղաքական
կեանքը կարող է համարուել նոյն
ազգի հասարակական կեանքի երե-
ւոյթներ յաջորդութիւնն :

(Մնացեալը յաջորդով)

Մշոյ և Սասնոյ արկածելոց, այս անգամ ալ նոր հանգանակութիւն մը կատարած և ցուցակը շրկած է մեզ հրատարակութեան համար: Ըստ այս ցուցակին 180 ֆր. ը հաւաքած և շրկած է Պատրիարքարան: Մինչդեռ առջի հանգանակութեան 480ֆր. շրկած էր Պատրիարքարան: Եւ յայտարարեց իր անհատական յանձնախումբին կամ աւելի ճիշդը Վերո Արմէնիայի խմբագրութեան: Մենք դատաւարտած էինք քահանային այս քայլը թէ հայերէ հաւաքուած գումար մը ինչու օտար ձեռքերու կը յանձնէ՝ երբ ասդին Ազգ. Պատրիարքարանը ոչ նուազ գիւրութեամբ և ճշգրտութեամբ նպատակները բուն նպատակին կարող է հասցնել:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Մարէշալ Ֆէյզի բաշանըն Արապ ասըլարընա գարշը ուֆագ պիր ֆիթուաթ կէթիւրմէսինէ միւքեաֆաթ օլմագ իւզրէ, Սուլթան անա մուվազգաթէն Ենմէն վալիսի նամընը իհաթ իթմիշ տիր:

—Մաքթանիսանըն Մանասթըր վիլայէթինտէ Բօթարէվօ նամ քէօյաթ Պուկար չէթալարը պուլընմագ պէհանէսի իլէ՝ Թիւրք ասքէրէրի մէքքիւր քէօյիւ կիւնէ վագթը պասուպ, էհալիի տէհչէթէ ուղրաթուգտան սօնրա պիր գաշէվ եագմըշար տիկէր խանէլէրի եօղամըշար վէ պիր թագըմ սարգընթըլըգտան սօնրա՝ կէշուպ կիթմիշէր տիր:

Սօֆիա կազէթալարը պու վազալը պէօյիւկ պիր ճինայէթ նէվինտէն կէօթէրիյօրլար: հալպուքի օնտանտէհչէթիսիհէր կիւնէ Էրմէնի քէօյէրինտէ վուգու պուլմագտա օլաղը հալտէ կազէթալարտա զիքրի պիլէ կիշմէյօր:

—Սիվրիհիսարտա եանկըն զուհուր իտուպ 78 էվլէր եանմըշ տըր: պուլար հէքիսի էրմէնի էվլէրի օլմաղլէ սահպլէրի քիւլլէն սէֆիլ գալմըշար: Եանան խանէլէրտէն 10ը սիւկիւրթալը ըմըշ: Թահգիգաթտան անլաղըլը իւզրէ մախսուս եագըլմըշ:

ՏԱԻԻԼԻ

Պիլիպէտէ օսմանը լիւրասը տարպ իսէն պիր գալպազան ֆապրիգասը պուլընմըշ տըր: Գալպազանլար էվլէլէն Թիւրքի ալա գալմըշար իսէտէ անլէրին պէշ քիշիտէն միւրէքէպ պիր չիքթէթ օլաղըլարը անլաղըլմըշ:

տըր: Պուլար Պ. Մանէվ, Խրիստօ Մաթէէվ, Գուլուսէն, Թոմով վէ գահլէնթի Թորոս նամ շախար ըմըշ:

Իշպու գալպազան շիրքէթի բէք չօգ լիւրա քէսմիշ: Եալմըշ 400 առէտ Թրանսվալ նամ գահլէլանտէ պօղտուրմուշար: Շիրքէթէ պէհէր առէտի եէտի պուլուգ ֆրանգա մալ օլուր ըմըշ վէ քէնտիլէրի չօգ խարճամագ իշիւն լիւրալարը 12 ֆրանգա պօղտուրմուշար:

ՐՈՒՍԻԱ

Չար հէյէթի վիւքէլալը վէ ալանը տէվլէթի թէճէմիւ իտուպ քէնտիլ քէյասէթի ալթընտա՝ իսլահաթ մէսէլէսինտէն տօլալը իճրաի միւգէքէրաթ իթմիշ օլմաղլէ, չու կիւնլէրտէ օլ խուսուստա պիր իւքաղ (ֆէրման) պէքլէնմէքտէ տիր:

—Չարքօն Սէլտա Չարըն ասքէրէրի թէֆթիշ վէ մուայէնէ իթմէսի թէթիսի օլընտը, զիւրա Չարըն հալաթընա սուի գասթ իթմէք թէտպիրինտէ պուլընմագ շիւրհէսի իլէ տէօրտ շախս տէրտէսթ օլընմըշար:

—Օտտաւա էլան իտարէի ասքէրիյէ տէվամ իթմէքտէ օլուպ, սօն վուգուաթլարտան տօլալը սէրպէստիյէթ թարաֆտարլարընտան վէ մէքթէպիլէրտէն չօգ քիշիլէր թէվգըֆ օլընըյօրլար: վէ էն զիյատէ Եահուտիլէր մէսուլ թութուլիյօրլար:

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Սախալին ատաւընըն մուհաֆագասը գալուպտէ ճարօնըլարըն էլինէ կէշմէսինտէն տօլալը Չար միւթէսի օլարագ, ժէնէրալ Լինէվիչէ պիր նէվ թէքտիր իթմիշ օլմասը իւլէրինէ, Լինէվիչ չու մաալտա ճէվապ վէրմիշ տիր: Պիւլիւն գուլէթիմի Մանչուրիայա թօրլամագ իգթիզա օլաղընտան Սախալինէ մըգտարը քեաֆի ասքէր եօլլալամատըմ: ֆագաթ եագընտա Մանչուրիատա ճարօնըլար իւզէրինէ պէօյիւք պիր ֆիթուաթ մէթիւրէնէկիւմէ էմին օլաղըմ կիպի պիլ ալէրէ Սախալինի կէրի ալմալա մուվաֆագ օլաճաղըլ:

Աֆէրէմ...

—Ճարօնըլար Սախալինի Րիքօլսը նամ սօն չէհրինի տախի գալթ իթտիքտէն սօնրա՝ 800 քիշիլէք պիր Րուս ալալընա թէսատիւֆ իտէրէք, չէտիտ պիր միւտարէպէ նէթիճէսի օլարագ, Րուսլարըն 700 քիշիլի թէլէֆ վէ եէսիլ իթմիշէր տիր:

—Թօքիտան ալընան պիր թէլէկրաֆ՝ Մանչուրիատա ումու

մուհարէպէնին եագըն կիւնտէ պաշլալաճաղընը պիլտիրմիշ տիր:

—Րուսիանըն սուլհ մուրախասը Մ. Վիթէ տէմիշ տիր քի՝ պուլնտան սօնրա ճարօնըլարըն կէթիւրէնէքլէրի ֆիթուաթը սալըլմալաճագ, եանի միւսալէհայէ էսաս թութուրմալաճագ տըր: Ֆագաթ մուղալիլի օլարագ ճարօնըլար տախի սուլհմալէնին իմզալանմաղընա տէհիլին միւթարէքէ թէքլիֆինի գալուլ իթմէյուպ մուհարէպէյէ տէվլամ իտէնէկիլ տէյօրլար: Ճարօնըլարըն էֆքեարը խարպիւնի վէ վալտիլօթօքը զապթ իթմէտիքէ Րուսլարըն եագասընը պըրագմագ տըր:

—Պիր ճարօն տիրմաթը տախի մաղուպ օլան Րուսիա մուհարէպէ մէսարիֆլէրի էօտէմէկէ րալի օլմատըգմա սուլհ միւթին օլմալաճագ տէմիշ տիր:

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐ

Թօքի 22 յուլիս—Սախալին ատաւընըն իտարէսինի թէշքիլ իթմէք իշիւն միւլքիէ մէմուրլարը Կօլա չըգարըյօրլար: հիւքիւմէթին մէքքիլ Ալէքսանտրօվսքա թէսիս օլընմագտա: —Ամերիկա մալլէրինէ գարշը Չինլի թիւճարլարըն ումուլի պօյքօտը սեպտ. 1 տէ պաշլալաճագ օլաղընը ճարօն կաղէթալարը եաղիյօր:

—Սիւնպօլ 29 յուլիս—Մարէշալ Ֆէյզի բաշանըն ասքէրլէլի չիմի Սանատան պիր գաշքիլմէթիւ իրագտա պուլընըյօրլար:

ՄԻԻԹԷՆԻՎԻԼԻ

Ինկիլիզ տօնանմաղընըն եագընլարտա Պալթիկ տէնիլինի կէզմէյէ կիտէնէկիւնին հալալտիսի Ալմանիատա րահաթըլըգ հասըլ իթտի: Չիրա Ալմանիա Րուսիա իլէ իթթիֆագէն մէղքիւր տէնիլի էննէպիլէր էսիւնէ գարալագ էֆքեարընտա ըտը: վէ չու հալտէ ինկիլիզ տօնանմաղընըն պու հարէքէթի մէղքիւր էֆքեարա գարշը պիր նիւմալիշ առտ իտէյօր:

—Մարօք իշիւն թէճէմիւ օլընմագ գօնֆէրանտըն Մատրիտտէ թէճէմիւ օլընմաղընը Ալմանիա Սպանիա հիւքիւմէթիւնէ թէքլիֆ իթմիշ տիր:

Քէզա մէղքիւր գօնֆէրանտա հէր պիր գարար միւթթէֆիգէն վէրիլմէսինի Ալմանիա շարթ գօյլագ իսթէյօր իտէնէ հէր պիր տէվլէթին պիր մէսէլէտէ պիւլա իսթիսնա միւթթէֆիգ գալմաղը միւթիլին օլմալաճագընտան տիկէր տէվլէթիւր Ալմանիանըն պու շարթընը գալուլ իթմէյէնէքլէր կէօրիւնիյօր:

ԹԻԻՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, Թուիս 23
ՉԱԽԻՐԷ

Պուլսուս	54-60 լիպ. 8.60 / 11. 40/2
Արապա	52-62 լիպ. 9. /11 60
ԱՐԲԱ	
Վալօն 100 քիլո հին	11. /11. 20
Արապա Եւնի 42-47 լիպ. 8.60 / 7 20	
ԵՈՒԼԱՅ արապա 38/36 լիպ. 5. 20/5.70	
Վալօն 100 քիլո	9. 40/10. 20
ՖԱՍՈՒԼԵԱ 100 քիլո	եօգ
ՌԱԲԻՑԱ 100 »	19. 20 19.60
Արապա 100 քիլո	16—18
ՏՍՐ արապա հէքթ.	եօգ
ԴՕԼՕՁ արապա 55-60 լիպ. 11. /12.80	
ՄԻՍԻՐ 57-58 լիպ. 6. 40/7.60	
» 100 քիլո	11.20- 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա 7. 70/ 8.	
» 100 քիլո	10. 80 /11. 20
Կիւնտէ 15—20 վալօն վէ	30—4
արապա կէլմէքտէ. վալօն մուամէլէսի նարօլէն 20 ֆր. արապա մուամէլէսի նարօլէն 20. 20	
ՍՍ.ՐԱՅԻՑԷ	
նարօլէն 20, 20 ֆրանք	
Օամ. լիւրար 22, 75 ալթուս ֆրանք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարնա ըրագտընտա պաղպալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուս ֆրանք իլէ:	
ԿԱՎԷ	1,93/ 2.15
ՇԷՎԷՐ նէմէյէ	75
ՇԷՎԷՐ քէմէլ սանարգ	38.
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը	42
» ճարօն	34 .
» Ինկիլիզ »	28.
Բիգօն »	49.
ԿԱՁ Սանաղր	11. 60
ՉԷԹԻՆ Եաղըմ քիլո	85.—1
ԳՈՒՐՈՒ Իւզիւր	25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳՐԱՅԷ

ԱՄԻՐԱՆԵԱՆՆԻ

Ի Վանա

— օգտ —

Գլխաւորապէս ֆրանսիէն լեզուով

Պարտաւորիչ են նաեւ Հայերէնը եւ Պուլկարիէնը. իսկ Գերմանիէնը, Անգլիէնը եւ պիւստփափաղընէնը մասնաւոր պայմանով: Դպրոցը կիւսի յառաջիկայ սեպտեմբերի մէկին: Իմիւր 8 ֆրանք մէկ աշակերտէն: Կան արդէն գիշերօթիկներ, եւ մի քանիք ալ կընդունուին: Այս մասին գրմիլ երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբթ օրերը երկկօյնեան ժամը 5-8 եւ կամ նամակով

Ա. ԱՄԻՐԱՆԵԱՆՆԻ

2-5

ԿՈՒԶՈՒԻ

Ազգ. Երկսեռ վարժարանաց համար կարող եւ վկայեալ ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ կուզուին:

Փափաքողները կրնան դիմել անձամբ կամ գրաւոր վարժարանաց հոգաբարձութեան:

Հոգաբարձ. Ազգ. Երկ. վարժարանաց Վանայի: [Կնիք]

Շու միայն ազգային վարժարանի համար վկայեալ տնօրէն գասաու մը եւ երաժիշտ օգնական գասաու մը գոհացուցիչ պայմաններով:

Փափաքողք պէտք է գիմն ուղղակի հոգաբարձութեան հասցէին:

Հոգաբարձ. Շու միայն Ազգ. Երկսեռ վարժարանաց:

Одговорилихъ А. Курбетянъ
печатница П. Гаушкоть и С-не — Варна